Zentrale Gedenkfeier zum Völkermord an den Armeniern
24. April 2009, Frankfurter Paulskirche

Grußwort von Hambardzum Minasyan, Geschäftsträger der Botschaft der Republik Armenien in der Bundesrepublik

Գերաշնորհ Տեր,
Հարգելի պարոն Հովասափյան,
Հարգելի պատգամավորներ Հեսսեն երկրամասի,
Սիրելի հայրենակիցներ,
Տիկնայք և պարոնայք,

Այսօր՝ Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակի ոգեկոչման օրը, պատիվ ունեմ Գերմանիայում Հայաստանի Հանրապետության դեսպանության անունից Ձեզ ողջունել:

Կատարվեց մի ոճրագործություն, որ մեր ժողովրդի եւ մարդկության պատմության մեջ չուներ իր նախօրինակը եւ նույնիսկ անուն չուներ: Մենք տվեցինք միլիոնավոր անմեղ զոհեր եւ հազարամյակների հոգեւոր-մշակութային եւ նյութական ժառանգության անչափելի կորուստներ: 1915 թվականը դարձավ սահմանաբաժան մեր ժողովրդի ճակատագրում: Այն կտրուկ կերպով փոխեց եւ խաթարեց հայ ժողովրդի բնականոն զարգացման ուղին: Դրա ծանր հետեւանքները մինչ օրս իրենց զգացնել են տալիս թե՛ հայրենաբնակ, թե՛ սփյուռքի հայության կյանքում:

1919թ մարտին Հայոց ցեղասպանությունը վերապրած արևմտահայ մի խումբ մտավորականների նախաձեռնությամբ Պոլսում ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որի գլխավոր նպատակը Մեծ Եղեռնի զոհերի չորրորդ տարելիցի կապակցությամբ հիշատակի միջոցառումների կազմակերպումն էր: Այսպիսով, այս տարվա ապրիլի 24-ը՝ որպես Մեծ Եղեռնի ոգեկոչման օր նշելու 90-ամյա տարելիցն է: Հանձնաժողովի համառ ջանքերի շնորհիվ էր, որ պոլսահայ իրականությամ մեջ առաջին անգամ հասարակական բարձր հնչողությամբ ոգեկոչվեց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակը: Արևմտահայ գրող-հրապարակախոս, հասարակական գործիչ Հակոբ Սիրունին այս մասին իր հուշերում գրել է. *«Մեր սարքած սգատոնը այլեւս աւանդական դարձաւ: Այն օրէն որդեգրուեցաւ Ապրիլ 24-ը իբր համազգային սուգի խորհրդանշան»:*

Օսմանյան կայսրությունում 1,5 միլիոն հայերի ոչնչացումը, ինչպես նաեւ նրանց զանգվածային վտարումը եւ տեղահանումը, որն իրականացվել էր երիտթուրքական կառավարության կողմից, ապացուցված պատմական փաստ է, որն ունի մեկ անուն՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ եւ այն լիովին համապատասխանում է ՄԱԿ-ի կողմից ընդունված կոնվենցիաների դրույթներին: Այն ցեղասպանություն էր, քանի որ

պետական մակարդակով ծրագրված էր մի ամբողջ ազգի դեմ՝ հայ ժողովրդի բնաջնջում, ֆիզիկական ոչնչացում: Այն 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն էր, աննախադեպ մի իրադարձություն:

Հայոց ցեղասպանությունը միջազգային հանրության կողմից դատապարտվել է տարբեր մակարդակներում՝ սկսած առանձին մտավորականներից մինչև ամբողջ պետություններ, որոնց թիվը գնալով աճում է: Այսօրվա դրությամբ, մարդկության դեմ այդ ոճրագործությունը ճանաչել և դատապարտել են աշխարհի 21 պետություններ, ԱՄՆ 42 նահանգներ, տարբեր միջազգային կազմակերպություններ և հաստատություններ:

Տիկնայք և պարոնայք,

Թուրքիան շարունակում է իրագործել իր անհիմն ժխտողական քաղաքականությունը: Գիտնականների միջև կոնսենսուսի հասնելու կամ հետագա ուսումնասիրությունների անհրաժեշտության մասին բոլոր փաստարկները ձևական են, ավելին, ժամանակի էժանագին շահարկում: Ցեղասպանությունը մերժող փաստարկներն ունեն քաղաքական դրդապատճառներ և ոչ մի կապ չունեն և չեն կարող ունենալ պատմական իրողության հետ:

Գիտնականները կատարել են իրենց աշխատանքը: Այժմ եկել է քաղաքական գործիչների պատասխանատվության ամրագրման՝ ոճրագործությունն ինչպիսին որ այն եղել է՝ ցեղասպանություն, կոչելու պահը: Եվ Թուրքիան այսօր հնարավորություն ունի չմնալու ինքնախաբեության ու պատճառաբանությունների խավարում խարխափող երկրի կարգավիճակում, այլ դառնալու իր պատմությանն ու իրականությանն ուղիղ հայացքով նայող ժողովրդավարական պետություն:

Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում գտնվող, համաշխարհային հանրության կողմից հայոց ցեղասպանության ճանաչման հարցը հայ ժողովրդի օրինական պահանջների եւ սպասումների արտահայտությունն է: Խորապես համոզված եմ, որ պատմական արդարության վերականգնումն անխուսափելի է: Մենք հավատով ենք նայում ապագային, մեր երկրի եւ պետականության բարգավաճող վաղվա օրվան, որն աշխարհով մեկ սփռված համայն հայության համատեղ ջանքերի և արարչության արդյունքը պետք է լինի:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը եւ դատապարտումը միայն Հայաստանին վերաբերող խնդիր չէ: Այսօր այն պետք է դիտարկվի տարածաշրջանային եւ միջազգային քաղաքականության համատեքստում: Մենք բազմիցս արտահայտել ենք մեր դիրքորոշումը, որ հայության շարժառիթները վրեժխնդրական չեն: Մենք այսօր էլ բարձրաձայնում ենք առանց նախապայմանների Թուրքիայի հետ բնականոն և քաղաքակիրթ հարաբերություններ կառուցելու մեր պատրաստակամության մասին: Սակայն, Թուրքիայի հետ հարաբերություններ

հաստատելը չի նշանակում մոռանալ Ցեղասպանությունը, թուրքերի հետ հարաբերություններ հաստատելը չի նշանակում ստորադասել մեր ազգային շահերը:

Սիրելի հայրենակիցներ,

Ցեղասպանությունը իրականացվեց բազմաթիվ նախադրյալների եւ պատճառների համադրմամբ: Դրանցից ոչ մեկը չի կարող արդարացնել ոճրագործին: Բայց հայկական պետականության բացակայությունն այն առանցքային նախադրյալն էր, որի պայմաններում հնարավոր եղան աներևակայելի իրադարձություններ: Այսօր մենք խոնարհվում ենք մեր անմեղ նահատակների հիշատակի առաջ՝ համակված վշտով, բայց համոզված, որ Հայաստան պետությունը երաշխիքն է համայն հայության անվտանգության ու հավերժության:

Շնորհակալություն ուշադրության համար: